ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« -----» փետրվար 2017**թ.** **N-----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևան քաղաքի ավագանու 2016 թվականին հունիսի 24-ի հ.558-Ն որոշմամբ հաստատված Երևանի «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի» դրույթները, ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես վառելիք բացառապես էլեկտրաէներգիա օգտագործող և բացառապես էլեկտրական շարժիչով աշխատող ավտոտրանսպորտային միջոցի (էլեկտրամոբիլ) սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող հանդիսացող և այն ղեկավարող անձանց համար սահմանել ավտոկայանատեղի տեղական վճարի գծով արտոնություն՝ ազատելով հաշվարկված ավտոկայանատեղի տեղական վճարի վճարումից:

2. Սահմանել, որ ավտոկայանատեղի տեղական վճարի գծով արտոնության տրամադրման համար հիմք է հանդիսանում սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կողմից Երևանի քաղաքապետին ուղղված դիմումը, որին կցվում են ավտոտրանսպորտային միջոցի սեփականության վկայականի կամ ավտոտրանսպորտային միջոցն օրինական այլ հիմքով տիրապետելու հանգամանքը հաստատող փաստաթղթերի, տեխնիկական անձնագրի պատճենները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի հունիսի 24-ի հ.558-Ն որոշմամբ հաստատված Երևանի «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրով» քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում սահմանվել են էներգախնայողության, էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ: Տրանսպորտի ոլորտում Երևանի քաղաքապետարանը կարևորում է էլեկտրական շարժիչով աշխատող ավտոտրանսպորտային միջոցների շահագործումը Երևանում՝ նպատակ ունենալով Երևան քաղաքի վարչական տարածքում նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները: Որպես վառելիք բացառապես էլեկտրաէներգիա օգտագործող և բացառապես էլեկտրական շարժիչով աշխատող ավտոտրանսպորտային միջոցների կիրառումը խթանելու նպատակով համայնքի իրավասությունների շրջանակներում առաջարկվում է սահմանել ավտոկայանատեղի տեղական վճարի գծով արտոնություն:

Համապատասխան արտոնություն սահմանելու առաջարկով 2016թ. դեկտեմբերի 14-ին հ.14.12.16/01 գրությամբ հանդես է եկել «Հայ-ամերիկյան բարեկամություն» հասարակական կազմակերպությունը: Վերջինս իր կողմից իրականացվող «Կանաչ ենթակառուցվածքներ» ծրագրի շրջանակներում դիմել է նաև ՀՀ կառավարություն՝ «Ճանապարհային երթեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքում և «ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» հ.955-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման մեջ էլեկտրամոբիլի սահմանման, ճանապարհային երթևեկության նշանների մեջ էլեկտրամոբիլների համար անհրաժեշտ ճանապարհային նշանների կիրառման և այլ առաջարկներով, որոնց համար ստացել է դրական կարծիք:

Ճանապարհային ոստիկանության էլեկտրոնային ռեգիստրում 09.01.2017թ. դրությամբ հաշվառված է բացառապես էլեկտրական շարժիչով աշխատող 6 ավտոտրանսպորտային միջոց:

Առաջարկվող որոշումը կնպաստի էկոլոգիապես մաքուր տրանսպորտի տարածման և զարգացման համար անհրաժեշտ օրենսդրական բարենպաստ միջավայի ստեղծմանը, կխթանի դրա համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծմանը և զարգացմանը, որն իր հերթին կհանգեցնի «կանաչ» տեխնոլոգիաների տարածմանը, ներկրվող վառելիքներից կախվածության նվազեցմանը, ինչը կարևոր նշանակություն կունենա ոչ միայն Երևանի, այլ նաև ամբողջ Հայաստանի համար:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն տեղական տուրքերի և (կամ) վճարների գծով արտոնությունները համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է որպես վառելիք բացառապես էլեկտրաէներգիա օգտագործող և բացառապես էլեկտրական շարժիչով աշխատող ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող

հանդիսացող և այն ղեկավարող անձանց համար սահմանել ավտոկայանատեղի տեղական վճարի գծով արտոնություն՝ ազատելով հաշվարկված ավտոկայանատեղի տեղական վճարի վճարումից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Ավտոկայանատեղի տեղական վճարի գծով արտոնություն սահմանելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Ավտոկայանատեղի տեղական վճարի գծով արտոնություն սահմանելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2017թ. բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ